



ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԵՆԱԳՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ա. Յ. ՄՈՒՆԵՐՅԱՆ

Պատմահայր Խորենացու Հայոց պատմությունը երկար ժամանակ քննության առարկա է եղել հայ բանասերների համար: Աշխատություններում ընդհանուր առմամբ նկատվում է հեղինակների որոշակիորեն խիստ և ոչ այնքան անաչառ վերաբերմունքը պատմության թերի կողմերի և հակասական որոշ դրվագների նկատմամբ: Երբեմն նրանք անխնա քննադատել և նսեմացրել են պատմիչին՝ փաստերի խեղաթյուրման և անուճների աղավաղման առիթով: Այստեղ քննելու ենք Խորենացու պատմության մեջ ներկայցված որոշ մանրամասներ, որոնք հայագիտության մեջ տարակարծություններ են առաջացրել կամ հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել:

Պայապիս. Պատմահայրը *Պայապիսի* անունն արժարծում է Արամի՝ Փոքր Ասիայի կողմերում վարած պատերազմների կապակցությամբ: Նրա անունը հայտնվում է հետևյալ հատվածում. «Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարևմուտս՝ պատահէ նմա (իմա՝ Արամին) *Պայապիս Քաղեայն* Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ուներ զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն եւ զՈվկիանոս»¹: Անվան տարընթերցվածներն են՝ *Պայպիս*, *Պարապիս* և *Պայապ*. առաջինը և երրորդը համառոտված ձևեր են, երկրորդը սխալագրություն է: Անցյալի հայագետները տարբեր կերպ են մեկնաբանել անունը: Հարկ է նշել, որ Մ. Աբեղյանը նախ և առաջ Արամի և Պայապիսի կռիվը առասպել համարելով՝ նույնացնում է Չևսի և Տիփոնի կռիվի հետ և, շեշտելով այն հանգամանքը, թե Տիփոնի զավակը Քիմայրան է «քաղ» նշանակությամբ, ապա եզրակացնում է, թե ճիշտ են վարվում այն ուսումնասիրողները, այդ թվում և Մարկվարտը, ովքեր այս հսկայի (*Պայապիսի*) անվան մեջ տեսնում են «Պապայոս խիմայրագետեսին» (Պապայոս խիմայրածնին/քիմայրածնին), որ հայերեն կհնչի «Քաղի զարն» կամ «Քաղեայ»²: Ուստի՝ *Պայապիսի* կամ այլ ընթերցմամբ *Պայապայի* անունն ըստ նրանց առաջացել է հին հունական դիցաբանության *Պայ* այծամարդու անունից, այսինքն՝ ստացվում է, որ *Պայապիսը* առասպելական հերոս է²: Յ. Մարկվարտը նախապատվությունը տալիս է *Պապայիս* տարբերակին և դա իր հերթին համենատուր սանդարամետի փոքրասիական աստվածություն *Պապայասի* (իմնտ. *Papa* պալայական երկնքի

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տիփլիս, 1913, էջ 46:

² Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հ. 1, Եր., 1968, էջ 54, 66-68:

աստվածություն), փոյուզական Ատոխի՝ *Papas*, ընդհանուր առմամբ «հայր» նշանակող բառերի հետ³: Այդուհանդերձ, *Պապայասը* կարող է լինել պատահական զուգադիպություն, քանի որ վիճարկելի է մնում բուն սկզբնաձևի հարցը, այսինքն թե տարրնթերցվածներից որն է նախնականը, որն է ավելի հարազատ բնօրինակին՝ *Պայայիսը*, թե *Պապայիսը*. -այա- և -ապա- հնչյունախմբերի առկայությունը ցույց է տալիս, որ կան մեկը, կան մյուսը դրափոխված ձև է: Նշենք, որ փոքրասիական ծագում ունենալու դեպքում Մարկվարտի առաջարկը լիովին բավարարում է՝ որպես անվան բացատրություն: Բացի դրանից, Մարկվարտը *Պայայիսին* զուգադրում է նաև Ամենոփիս արքայի խորհրդականի հոր՝ Պաապիսի անվան հետ⁴: Այդ համապատասխանությունը լեզվական տեսակետից ավելի հավանական է, եթե *Պայայիսն* ընդունենք որպես սկզբնաձև: Պայայիսի *Քա(ա)դեան* լրացական անունը նա կապում է հայ. *քաղ*՝ «արու այծ» բառի հետ, որը հետագայում կրկնել են բազմաթիվ ուրիշ ուսումնասիրողներ և՛ անտեսելով պատմահոր ներկայացրած ծննդաբանության մասին տեղեկությունները:

Գ. Ղափանցյանը ենթադրում է, որ *պայը* խոտիական-փոքրասիական ծագմամբ բառ է՝ «քաղ» նշանակությամբ: *Պայայիսը*, ըստ նրա, կազմված է ընդհանուր տարածում ունեցող -*արի* ածանցով, ինչպես ուրիշ անունների դեպքում է՝ *Աոն-արի*, *Սոբոն-արի*: Բացի դրանից, *պայ*-ը մասնակցում է նույնպես փոքրասիական ծագմամբ բաղադրյալ անունների կազմությանը՝ *Pai-tešup*, *Pai-šarri*⁵:

Խորենացին մեկ առ մեկ հիշատակում է Նոյի տոհմաժառոյի անդամներին՝ հենվելով Սուրբ Գրքի և հին մատենագիրների, մասնավորապես՝ Աբյուդենոսի և Եվսեբիոս Կեսարացու տվյալների վրա: Ըստ Խորենացու ներկայացրած տոհմաժառոյ՝ Քամ նահապետի ժառանգներից մեկը *Քայաղն* է՝ Արբելի որդին:

Արբել ծնանի Քայաղ:

Քայաղ ծնանի գմիս Արբել⁶:

Ընդամին, նշենք, որ *Քայաղը* նույն *Քաաղեայ* անվան հիմքն է, նրա չթերված ձևը: Պատմության տարբեր գրչագրերում հանդիպում են *Քաղեայ*, *Քաղեայն*, *Քայաղեայ* տարրնթերցվածները, ուստի՝ կարելի է պնդել, որ *Քայաղ/Քաաղի* որդի *միս Արբելը* համընկնում է *Պայայիսի* հետ: Դա նշանակում է, որ *Պայայիսը* հայոց Արամ նահապետի ժամանակակիցն է և գրեթե նույնը վերաբերում է հորը՝ *Քայաղին* կամ *Քաաղին*: Պատմական փաստերը հաստատում են բերված համապատասխանությունը: Ըստ Չամչյանի ցուցակի՝ *Քայաղն* իշխել է 55 տարի: Հայտնի է, որ Աշշուրդան Բ-ն իշխել է մ.թ. 906-884 թթ.: Այստեղից հետևում է, որ Աշշուրդանին հաջորդող Աշշուրնաժիրպալ Բ-ն (մ.թ. 884-859 թթ.) համընկնում է Խորենացու *Պայայիսի* կամ *միս Արբելի* հետ, համապատասխանաբար՝ Աշշուրդան Բ-ն համընկնում է *Քայաղի* հետ: *Պայայիս* անունը, ինչպես Թոնոսը և Չամեստը՝

³ St' u J. Marquart, Le berceau des armeniennes, "Revue des etudes Armeniennes", VIII, f. 2, Paris, 1828, էջ 221-222:

⁴ St' u նույն տեղը, էջ 221:

⁵ St' u Գ. Капанцян. Хайаса- колыбель армян, Ер., 1947, էջ 225:

⁶ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 18:

ասուրական անվան հունական տարբերակ է և, թերևս, գործածության մեջ է եղել վաղ բյուզանդական աղբյուրներում: Ըստ Խորենացու՝ և՛ *Քայաղը*, և՛ *միս Արբէլը* (ի՛նչ - *Պայապիսը*) Քամի տոհմածառի անդամներ են, և ըստ էության նույնանուն են հին ասուրական արքայատոհմի նշված թագավորների հետ: Սա ապացուցում է նաև, որ *Այրարատյան* թագավորության Արամի (սեպագիր արձանագրություններում՝ Arame/Aramu, ն.Ք. 860-840թթ.) և հայոց Արամ մահապետի քաջագործությունները՝ համաձայն պատմական աղբյուրների, համընկնում են:

Պարոյր. Ըստ Խորենացու՝ *Պարոյրը* հայոց բնիկ նախնի սերնդից առաջինն էր, ով թագավորի տիտղոսի արժանացավ և թագադրվեց: Պատմահայրը տեղեկացնում է, որ նա սկզբում նախարար էր և Ասորեստանյան գահակալի կողմից կողմնապահ էր նշանակված հայոց աշխարհում: Սկյութական արշավանքների և Առաջավոր Ասիայում նրանց կարճատև տիրապետության (ն.Ք. 652-626 թթ.) տարիներին հայոց Պարոյրը նախարար էր: Նա դաշնակցում է մարաց Վարբակեսին՝ ընդդեմ Ասորեստանի և թշնամուն հաղթելուց հետո՝ ի վերջո թագակրության արժանանում նույն Վարբակեսի կողմից⁷: Խորենացին հավաստում է, որ Պարոյրը Հայկ Նահապետի սերունդից էր, միևնույն ժամանակ արձանագրում, որ նրա գահակալությանը նախորդել է օտար տիրապետություն: Այդ նշանակում է, որ որոշ ժամանակ Հայոց երկրում իշխել են օտար տիրապետողները և այդ պատճառով է նախանդավատված նշում, թե. «եւ այժմ ահա զուարճացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնույն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան»⁸: Արամին նախորդող ժամանակաշրջանում պատմական Հայաստանի որոշ մասը՝ մասնավորապես Վասպուրական աշխարհը եղել է Ասորեստանի միահեծան միապետների տիրապետության տակ: Այդ մասին է վկայում ոչ միայն Վանի թագավորությունում ն.Ք. IX դարում՝ ասուրերենը որպես պաշտոնական լեզու գործածվելու փաստը, այլև այն ավանդությունը, թե Շամիրամն է որոշ ժամանակ իշխել և շենացրել Վանը, որի հիմքում, թերևս, պատմական իրողությունն է: Քաղաքն այլ կերպ անվանվել է *Շամիրամի քաղաք* կամ *Շամիրամակերս*: Հղելով Մար Աբասին՝ Խորենացին գրում է. «Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օրոց և մաքրութեան ջուրց եւ երկրի, քաղաք եւ արքունիս շինել բնակութեան, որպէս զի գչորոքող մասն ի բոլորմանէ տարույն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանիցենք ի Հայս, եւ զայլս եւս երիս որոշմունս օրոցն զովութեան տածիցենք ի Նիմուէ»⁹: Այսինքն՝ Վանը դիտվել է Ասորեստանի կայսերական գահակալների ամառանոց և այդ ժամանակաշրջանում է ներմուծվել ասուրական սեպագիր գրչությունը և ավանդաբար փոխանցվել Վանի թագավորության գահակալներին՝ որպես հատուկ մշակույթ: Անվանն անդրադարձող ուսումնասիրողներից ոմանք՝ որոշ վերապահությամբ նրան նույնացրել են սեպագիր արձանագրությունների *Parjataua*-ի (հուն. Πρωτοθάύς) հետ. «Այդ տարում, երբ Իշկուզուլիս երկրի Շագան, Արգիշտեի ավագ որդու՝ Ռուսայի

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 64:

⁸ Նույն տեղում, էջ 65:

⁹ Նույն տեղում, էջ 51:

քաղաքից շարժվեց Մանա՝ Ակավայի տեղը, երբ Խալդին՝ որպես թագավոր ինձ կարգեց Ռուսախինիլիում՝ տեղափոխեց այն սրբավայրից, որը հանդիպակաց էր Կիրանի երկրին»¹⁰: Շարադրված փաստերի հիման վրա կարելի է պնդել, որ հյուսիսային կուսակալությունից՝ Իշկուգուլխե «երկրից», Շագան գործով շտապում է Ռուսախինիլի՝ պաշտպանելու մայրաքաղաքը թշնամիներից, մինչդեռ Ռուսա Բ-ն (մ.թ. 685-645 թթ.) թագադրվում է մեկ այլ վայրում, որը հանդիպակաց էր Կիրանի «երկրին» և Խալդի աստծու հովանավորությամբ վերադառնում Ռուսախինիլի՝ գահին բազմելու նպատակով: *Պարտաթուալի* և *Պարոյրի* նույն անձը լինելու վերաբերյալ հարկ է ներկայացնել առնվազն երկու հակափաստարկ: Նախ՝ լեզվական տեսանկյունից անունների նույնությունը անհնար է բացատրել, իսկ երկրորդ փաստարկն այն է, որ *Մադիոս* անունով որդու մասին հիշատակություններ պատմական աղբյուրներում չկան: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նրա որդին *Հրաչեան* էր:

Partatua անվան սեպագիր տարբերակը հուշում է, որ անունը ծագմամբ, հավանաբար, կիմերական է, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ և ունեցել է **Partatawa* հին սկզբնաձևը (ըստ Ղափան-ցյանի՝ **Paratatawa*):

Այլ տեսակետ է հայտնում Գ. Ղափանցյանը: Նա *Պարոյր* անվան նախատիպ է համարում Հեռոդոտոսի պատմության մեջ հիշատակված սկյութների *Protothyos* անունը: Վերջինիս *Protot/Prodod* հիմքի ամփոփմամբ ստացվել է **Prōd-* (**Parōd-*) և սա իր հերթին վերածվել է **Projr* > *Parojr*: Այսպիսի հնչյունական փոփոխություններ են առկա նաև իրան. *rōda* > հայ. *արոյր*, *bōda* > հայ. *բոյր*, *xōda* > հայ. *խոյր* բառերի դեպքում¹¹:

Ի. Դյակոնովը՝ Պարոյր անվան դիմաց վերականգնում է միջ. իրան. *Parōd* (իմա՝ *Parōd*) ձևը, ինչպես հայերեն –ոյր վերջավորությամբ այլ բառերի դեպքում է, հղելով Գ. Ղափանցյանին¹²: Ստորև մանրամասնորեն կներկայացնենք Վանում իշխանություն ձեռք բերած արքայատոհմի մասին ավանդությունը: Իմիջիայլոց, անդրադառնալով *Սկայորդի* անվանը և նախորդի հետ սրա հարաբերությանը: Մի քանի մասնագետների կարծիքով՝ *Պարոյր*՝ էպիկական հերոս է, իսկ «Սկայորդին» նշանակում է «Մակայի որդի»:

¹⁰ Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ер., 2001, № 412, (Թուփրակ-Կալեի արձանագրություն), с. 330: Ըստ Ի. Դյակոնովի վերծանած արձանագրության՝ Շագան՝ Իշկուգուլխե երկրի թագավորի ավագ որդին է (տե՛ս Ի. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, տեքստ 12, էջ 39, ծան. 80-93): Պատմական փաստերը հաստատում են, որ այդ ժամանակաշրջանում Մանա երկրի հարևանը փոքրաթիվ բնակչությամբ Իշկուգա երկիրն էր, որի թագավորն է եղել Պարտաթուան՝ ըստ աստուրական աղբյուրների: Իսկ Իշկուգուլխե երկրի Շագան որպես մարզպան՝ Ռուսայի գահ բարձրանալուց անմիջապես հետո տեղափոխվում է հարավ և գործը տեղակայում Մանա երկրից նվաճված Ակա ավանում: Դա մեկ անգամ ևս ապացուցում է, որ սագծիկները զինվորական ծառայության մեջ են եղել *Այրարատյան* թագավորությունում:

¹¹ Տե՛ս Գ. Капанцян, նշվ. աշխ., էջ 246, նույնի՝ «Историко-лингвистические работы», т. II, Ер., 1975, էջ 249:

¹² Տե՛ս Ի. М. Дьяконов. Предыстория армянского народа, Ер., 1968, էջ 174, ծան. 270:

Այդպիսի հետևությունը հենվում է «Սկայորդի» կեղծ բառի վրա, որն առաջ է եկել Խորենացու պատմության խմբագրման արդյունքում¹³: Պարզաբանենք մեր տեսակետը: Անցյալի հայագետներից Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ վերլուծելով Խորենացու *Պարոյրին* վերաբերող հատվածները՝ հանգել էր այն եզրակացությանը, որ «սկայորդի» բառը կեղծ ընդմիջարկություն է: Նա գտնում էր, որ Պարույրն օգնություն է խնդրում Վարբակից՝ Սկայորդուց իշխանությունը խլելու նպատակով¹⁴: Ուշադիր հետևելով համատեքստին՝ նկատում ենք, որ պատմության առաջին գրքի 21-րդ գլխի վերնագիրն աղավաղված է և չի համընկնում դրան հաջորդող տեքստի հետ, և ակնհայտորեն դա առաջ է եկել այն բանի շնորհիվ, որ գրիչները, ենթադրում ենք, պատմության առաջին օրինակները բազմացրել են անհետևողականորեն, իսկ խմբագիրները այդ խնդրին հետամուտ են եղել, թերևս, երկու-երեք հարյուրամյակ հետո, այն է՝ 8-9 դդ.՝ Հովհ. Դրասխանակերտցու օրոք: Ուստի՝ խումբացման պատճառով պատմության որոշ հատվածներ կարող էին անընթեռնելի դառնալ և տարընթերցումների տեղիք տալ: Այդ է պատճառը, որ շարադրանքի սկիզբը, որը դրված է. «իսկ մեր առաջին, ի Վարբակայ մարտ պսակեալ» վերնագրի տակ, խմբագիրների կողմից սխալ է շարադրվել և փոխանակ կարդալու. «որ ի սկայի որդուցն Պարոյր առաջին ի հայս թագաւորէ», որովհետև ստորև բերվող տեքստում պատմիչը շեշտում է Պարույրի՝ հսկայի, այսինքն՝ Հայկի տոհմածառին պատկանելու հանգամանքը, նրանք կարդացել են. «պարոյր, որդի սկայորդոյն. հրաչեայ»: Դա նշանակում է, որ Ասորեստանյան գերիշխանությանն ակնհայտորեն փոխարինել է մարական գերիշխանության շրջանը, և վերջինի դեպքում «առաջին բնիկ» թագակիր է դարձել Պարույրը: Վերը նշված «սկայորդին» մտացածին է, որը խմբագիրները խցկել են Հայկյանների տոհմածառի մեջ: Պարույրին ճիշտ է կոչել Պարույր Հայկազն, ինչպես ընդունված է եղել ավանդական պատմագրության մեջ, այլև աչքի առաջ պետք է ունենալ մատենագրության մեջ հիշատակված նրա լրիվ անունը՝ «ի սկայի որդուցն Պարոյր»:

Պատմական դեպքերի ընթացքն այսպիսին է. ըստ Հերոդոտոսի և Տրոգոսի՝ սկյութներն արշավում են հյուսիսից և հաստատվում առաջավորասիական տարածաշրջանում՝ 15-28 տարի, ըստ տարբեր աղբյուրների, և որոշ վայրերում նվաճում իշխանությունը՝ ինչպես այդ արեցին Մարաստանում, որտեղ նրանք գահակալեցին մոտավորապես 28 տարի: Միևնույն ժամանակ՝ ն.թ. 652 թ. Ասորեստանի տիրապետության դեմ ապստամբած դաշնակից ուժերը ջախջախվում են և Աշշուրբանապալը (ըստ Խորենացու՝ Մարդանապալ), Կիաքսարին (Վարբակին) տեղապահ է նշանակում Մարաստանում: *Պարոյրը* նախարար էր, և ի թիվս այլ ուժերի, հետագայում մասնակցում է Նինվեի գրավմանը, այնուհետև թագադրվում Վարբակեսի

¹³ Այս մասին մենք շարադրել ենք նաև մի ուրիշ՝ «Բննադատական դիտողություններ «Հայ ժողովուրդը հին ժամանակներից մինչև մեր օրերը» աշխատության վերաբերյալ» աշխատությունում, որը սույագրության ենք հանձնել 2004 թ., բայց տակավին անտիպ է:

¹⁴ Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Եր., 1979, էջ 73:

կողմից¹⁵: Ըստ երևույթին, դա տեղի է ունեցել **ն.Ք. 635 թ.**: Ամեն դեպքում, նա արդեն իսկ գահակալ էր **ն.Ք. 612 թ.**: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Նաբոնիդի իշխանության օրոք հայոց թագավորն էր *Հրաշեան*, ուստի՝ թերևս մինչև **ն.Ք. 604 թ.** իշխանությունը *Պարոյր Հայկազնի* ձեռքում էր: *Փռատրոստ* Ա-ի և *Կաթսարեսի* գահակալության միջև ընկած 26 տարիների ընթացքում Մարաստանում թագավորել են սկյութները (սագճիկը) և մասքութները (մազքութը), իսկ Վասպուրականում (Թորգոմա տանը)՝ *Ասքանազեանները*, ովքեր կրում էին իրենց գորավար, առաջնորդ Ասքանազի անունը: Ըստ այդմ՝ նախապես թրակացիների սերունդների միջև բաժանված կալվածքներից մեկի՝ «Թորգոմա տան» գավակները սկսեցին անվանվել նաև «Ասքանազեան», այսինքն՝ նրանց կցվեց նաև երկրորդ անունը: Ըստ ավանդության՝ այդ արքայատոհմի մարդիկ ծագումով սարմատներ էին: Այսինքն՝ հնում կա՛ն Հայկյան սերունդներն են ժառանգել գահը, կա՛ն եղել է օտար իշխանական տների տիրապետություն (ըստ յառաջադիմութեան, ոչ ըստ ազգի), որովհետև «Յառաջաբան պատմութեան» առաջին հատվածում Դրասխանակերտցին՝ շարադրելով Անուշավանի մասին, գրում է. «՚ի զարմից սորա եւ ՚ի զաւակաց ոչ տիրեալ գտանէին հայրենի նահապետութեանցն, այլ այլք ոմանք բռնակալեալք ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան տիրեալ Թորգոմեանս գրոհի (իմա՛ գահի), որոց անուանք են այսոքիկ. Պարետ, Արբակ, Զաւան ... Կայպակ» և այնուհետև ավելացնում է. «Յետ ամենեցուն սոցա Պարոյր անուն՝ յազգէ Հայկայ. աստանօր զանազան ազգիսն ՚ի բաց լքեալ հերքեալ՝ գնահապետութիւն ազգի իւրոյ վերստին նորոգեալ պայազատէր»¹⁶: Ուրեմն՝ նրանք բռնի տիրացել են գահին՝ արշավելով դրսից և այլ ազնվական ընտանիքների են պատկանել, ուղղակիորեն Հայկից չեն սերել: Խոսքը վերաբերում է իշխող վերնախավին, ովքեր տիրացան Թորգոմական տան գահին և կազմեցին արքունիքը: Հայկի սերնդից վերջին իշխողը **ն.Ք. 9/8-րդ դարերում** Անուշավանն էր՝ Արայան Արայի որդին՝ Շամիրամի որդու՝ Մինուասի (Չամեսեսի) ժամանակակիցը:

Այրարատյան թագավորության պատմության մեջ զգալի դեր են խաղացել նաև սկյութները (սագճիկներ), ովքեր, ըստ երևույթին, մարզպանական պարտականություններ են կատարել պետության մեջ՝ պաշտպանել երկրի սահմանները, հիմնել կուսակալություններ, հատկապես՝ Առեստ Ա-ի (Argište I) և նրան հաջորդող թագավորների իշխանության օրոք: Սկյութներով են մասնակիորեն բնակեցված եղել և սկյութական ռազմական կայազորներ են տեղակայվել պետության հյուսիսում՝ Տայքում և Կողքիսում՝ մանավանդ

¹⁵ Այլ տեղեկություն է հայտնում Կաղանկատվացին. «... Սկայորդի. սա էառ թագ ի բարելացոց թագաւորէն. Պարոյր, Հրաշեայ, Փռոմաւազ ...» (*Մ. Կաղանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Գիլք Ա, գլ. ԺԵ, Մոսկուայ, 1860): Թագադրման քվականը մնում է անստույգ: Այն կարող է տեղի ունեցած լինել կամ **ն.Ք. 636/5թ.**, ինչպես հուշում է պատմական ավանդությունը, քանի որ այդ քվին նա զրկվում է գահից, կամ **ն.Ք. 626թ.**, եթե հենվենք Կաղանկատվացու հայտնած այն տեղեկության վրա, թե բարելացիների թագավորն է (իմա՛ Նաբոպալասարը) նրան թագադրել, որովհետև ինքն անձամբ գահ է բարձրացել հենց այդ քվականին:

¹⁶ «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», «Յառաջաբան պատմութեան», Եր., 1996, էջ 22, թրգմ. Գ. Բ. Թոսունյանի:

նրանց անունը հաստատող Իճգսղիս և Աճգալաճի, Կուրից արևելք՝ Տակաժենե և հարավում՝ Ուրմիա լճի մոտակայքում՝ Աճկայա և Իճկուզա «երկրորդներում»։ Հաճախ նրանց անվանը փոխարինել է կիմերների անունը, նրանք կոչվել են ընդհանուր *gimirrai* անունով, որն ըստ էության ավելի հին անուն է և ինչպես հայտնի է վաղուց, քարթվելական ժողովուրդները գործածում են «հսկա» իմաստով¹⁷։

Արաստ/Երաստ. Ըստ բուն հայկական ավանդության՝ Արամայիս նահապետի թոռն է և Երասխ գետի անվանադիրը. «Այս Արամանեակ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամայիս. եւ յետոյ կեցեալ ամս շատ՝ մեռաւ: Իսկ որդի նորա Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն, եւ անուանէ զնա իւր անուն Արմաւիր. եւ զանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ»¹⁸: Անդրադառնանք անվանը. ձեռագրերում հանդիպում է -ա- և -ու- բնակազմիչներով՝ *Արաստայ*, *Արաստու*: Նույն անվան տարբերակն է *Անեսուն*, որը հիշատակված է Բուզանդի պատմության մեջ. «Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱնեսուն աւանի ՚ի ձկնատեսասնսն արքունի ՚ի վերայ գետակին»¹⁹: Դա մի բնակավայր էր, որն ընկած էր Վանա լճի հյուսիսային ափին և ծառայել է որպես արքունական ձկնորսատեղի. «Ի մմին ամսեան ՚ի մմին շաբաթու ՚ի մմին ատուր հասանէր Բագոս հանդերձ զօրոք՝ որ ընդ իւրեւ էին, զտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից եւ զԱնդիկական զօրագլուխ նոցա, զի հասեալ մածեալ բանակէին ՚ի վերայ ձկնատենիցն *Անեսունայ*»²⁰: Այստեղից կարող ենք վերականգնել նաև *գետն *Անեսունայ* հին կապակցությունը: Սա այն գետակի անունն է, որը թափվում է Վանա լիճը՝ Արճեշի մոտ: Դա կարևորություն է ստանում այնքանով, որքանով նույնանուն է ուրարտական *Argište* (**Անեսունի*) արքայանվան, մյուս կողմից՝ հին հունական դիցաբանության *Օրէսթէս* անվան հետ: Վերջինս՝ ըստ հունական առասպելների, ճամփորդել է քրոջ՝ Իփիգենիայի հետ՝ Տավրիկյան Սկյութիայից հասնելով Փոքր Հայք և հանգրվանել է Կոմանա քաղաքում: Իփիգենիայի մականունն է *Tauropolous* կամ «հեռի ասիական», այսինքն՝ նրանք ճամփա են ընկել Ստավրոպոլի (հմմտ. *Tauropolous*) մերձակայքից և կտրելով Հայքի սահմանները՝ հասել Գամիրք: Վաղ միջնադարի հայ իրականության մեջ անձնանունը գործածվել է զուգահեռ տարբերակներով՝ *Ուրբեսունտ* կամ *Անեսունտ*, երկու դեպքում էլ հունական վերջավորություններով. ի մասնավորի *Ուրբեսունտ* անունն է կրել IV դարում սրբոց շարքը դասված հայ քրիստոնյա նահատակներից մեկը²¹: Անունը մեկնաբանելիս Աճառյանը հենվում է Յուստիի և Բարթողոմեի տվյալների վրա, ովքեր անունը դիտում են իրանական փոխառություն, հանելով *ārāsti*, նոր պարսկերենում *ārāsta* «հարդարված, զարդարված» ձևից, որն, ըստ հեղինակների, ծագում է *rād* «պատրաստել»

¹⁷ Այս մասին տե՛ս **Б. Пиотровский, Ванское царство**, М. 1959, էջ 236-237, **И. Дьяконов, История Мидии**, М.-Л., 1956, էջ 238, 242, 247, 251, 272 և **Н. Арутюнян, Биайнили (Урарту)**, Ер., 1970, էջ 285, 326, 327:

¹⁸ **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., I. ԺԲ, էջ 39:

¹⁹ **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 34:

²⁰ Նույն տեղում, էջ 216:

²¹ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Եր., 1951, էջ 194:

արմատից²²: Ինչ վերաբերում է ուրարտական անվանը, ապա այստեղ նկատելի է հնչյունական հետաքրքիր անցում. արձանագրված ձևի մեջ արտացոլվել է հ.-ե. լարինգալը **-rH-*, որը հետագայում հայերենում վերածվել է *n-ի* (**-rH-* > *-r-*)²³: Դիցուք՝ *-p-ով* ձևերը պետք է դիտել որպես հնչյունափոխված տարբերակներ: Հունական *Optuuntu-*-ին հայերենի հետ է կապում մաս Դրոկոպիոս Կեսարացի պատմիչը, ով կարևոր տեղեկություն է հայտնում նրա առասպելական վարքի մասին: Ըստ նրա մեջբերած հայկական ավանդության՝ հայոց Տավրոս են փախել Իփիգենիան և *Optuuntu*: Ճանապարհին *Optuunին* պատուհասում է մոլագարությունը: Պատգամախոսը կանխագուշակում է, որ նա կապաքինվի, միայն եթե հիմնադրի Արտեմիսի անունով տաճար: *Optuunը* կատարում է նրա պատգամը և Եկեղեց գավառի Երեզ ավանում հիմնում տաճարը: Փախուստի ժամանակ, քույրը՝ Իփիգենիան, Կոմանա քաղաքում կտրում է ծամերը, այսինքն՝ առասպելական պատկերացումների համաձայն հաստատվում է այդ քաղաքում, որովհետև «մազեր կտրելը» ըստ առասպելական պատկերացումների նշանակում է «մնալ մույն տեղում, չտեղափոխվել»: Էնյոյի անունով տաճար է կանգնեցվում մաս Կոմանայում, իսկ «ողբի ծամերը» տեղադրվում են մույն սրբավայրում՝ որպես ծիսական մասունքներ²⁴:

Սաղմոսք (-իւք, -աց/-ից): Բալկանյան լեզուների գիտակ Վ. Գեորգիևը քրակ. *Zalmós* «մորթ, կաշի» բառը համեմատել է հին հնդկ. *sarman* «ծածկ» և գոթ. *hilms* «սաղավարտ» բառերի հետ: Այս հասարակ անունները մա մյուս կողմից զուգադրել է դիցաբանական *Zalmoxis* անվան և *zelmis* հասարակ անվանական բաղադրիչի հետ²⁵: Հայերեն բառն ունի հունական ծագում՝ *ψαλμός*, կրոնապաշտամունքային բառապաշարի բառերից է²⁶, և բացի հայերենից անցել է մաս ուրիշ եվրոպական լեզուների, ըստ որում մի քանիսում *ps-* երկհնչյունի դիմաց գործառում է պարզեցված *s-*ն, ինչպես գերմ. լեզվախմբի լեզուներից՝ դան. *salme*, շվեդ. *salm* բառերն են մույն նշանակությամբ: Ի դեպ, Լագարդի և Տոմաշեկի ստուգաբանությունները, կապված *Zalmoxis/Zamloxis* անունների հետ՝ որևէ լուրջ հիմք չունեն:

²² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 194, տե՛ս մաս *Bartholomae*, 335, *Justi*, 20b:

²³ Հայերենին հատուկ այդ օրինաչափությունը դիտարկում ենք մի քանի այլ անունների հետ կապված, ինչպես օրինակ Արգիճի (**rHič*) > Հառիճ/Յառիճ, այսինքն՝ հնագույն շրջանի լարինգալը *-r-ի* շրջապատում արտացոլվում է որպես *-q-* կամ ընդանրապես ընկնում է՝ *-r-q-* > *n* փոխանցմամբ (*RH* > *արq-/առ-/հառ-/եր-*): Խոսքը վերաբերում է մինչև քմայնացումն ընկած շրջանին, որովհետև **rg-*-ին հայերենում վերածվում է արծ-ի, ինչպես օրինակ՝ *rg'eto-* > արծաթ: Ինչ վերաբերում է բառասկզբում լարինգալի արտացոլմանը, ապա այն ևս իրացվում է որպես ետնալեզվային *q-* հայերենում, մասնավորապես ետին շարքի *-ու* ձայնավորից առաջ, ինչպես ցույց ենք տվել «Ուրարտական դիցաբանի կառուցվածքը» հոդվածում («Հանդես ամսօրեայ», 1998, թիւ 1-12, Վիեննա, էջ 249-267), ի մասնավորի՝ *huwari-* > Գուգարք անվան դեպքում է:

²⁴ *Strabo*, XII. 1. 2., XII. 2. 7, Ն. Արոնց, Հին հայոց աշխարհայեացքը, Պարիս, 1948, էջ 287:

²⁵ В. Георгиев. Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, с. 114.

²⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., էջ 166:

Մեր տեսակետն այն է, որ սաղմոսները և սաղմոսերգությունը ծագում են Թրակիայից և ըստ էության առնչվում քրակյան *Zalmoxis* աստվածության հետ, ով քարոզում էր հոգու անմահություն: Գտնում ենք, որ այս դեպքում տեղի է ունեցել անվան հասարակացում: Հայերենում ազգակից բառն է՝ *սեղս*, հ.-ե. *kel- «ծածկել» արմատի *kel- քմայնացած տարբերակի ածանցյալ *kel-mo ձևից: *Մեղ արմատական բառը կարող է բուն նշանակությամբ անվանել «վիհր, կացարանը» և զուգադրվել լատ. *cella* «պահեստ, պաաստան, կացարան», հին անգլ. *healh* «զաղտնի կացարան, վիրապ» բառերի հետ: Ինչ վերաբերում է -մ ածականով *սեղս* բառի զուգածներին՝ ապա դրանք են՝ հին անգլ. *helm* «սաղավարտ», հին ֆր. *helmet* «սաղավարտ»: Քույր լեզուներում ազգակից ձևերն ունեն կ-, ց-, հ- սկզբնահնչյունները: Վերջինիս հոմանիշ՝ *kel- արմատի քմայնացած, ստորին ձայնդարձով *kel- տարբերակից կազմվում է *kǝ-mo-no > *սաղմն* ածանցյալը²⁷:

Ըստ ավանդության՝ Չալմոքսը կենդանի քարոզիչ էր, եղել է Պյութագորասի աշակերտը և աստվածացվել միայն մահվանից հետո: Հատուկ ծիսական խնջույքի ընթացքում իր դավանանքի հետևորդներին նա համոզում էր, որ իրական հաճույքներն ու վայելքները անդրաշխարհում են, որից հետո, ծիսական արարողության վերջում, նա պատրաստում էր գետնափոր վիհ և չքանում այնտեղ: Ըստ էության՝ դա նմանակման ծես էր: Վիհում նա մնում է 3 տարի, ժողովուրդը ողբում է նրա կորուստը, իսկ չորրորդ տարում նա վերակենդանանում է²⁸: Նա, փաստորեն, մեռնող և հարություն առնող աստվածություն է, ինչպես հեթիթական Տելեպիմուն: Չալմոքսը երկրի աստվածուհու՝ Չեմելեի որդին է, ուստի նա երկրածին է: Անվան զուգածներն, ըստ իս, պահպանվել են թրակերենին մերձավոր՝ փոյուգական, հունական և սլավոնական «հող, երկիր» նշանակող բառերում՝ փոյուգ. *zemélo* «մայր-հող» և հուն. Σεμέλη, հ.-սլավ. земьнъ, земля, երկուսն էլ վերջնահանգի /n բաղաձայններով, հին ռուս. земь, լիտվ. žėme, չեխ. země²⁹ արմատական բառերում, սլովեն. *zémija* ածանցյալում: Ուրիշ լեզվական արեւելներում գոյություն ունեն մի քանի այլ ծագումնալին համապատասխանություններ՝ հ.հնդկ. *kṣam-*, լատ. *humus*, որոնք, սակայն, հնչյունական տեսակետից այդքան մոտ չեն թրակերենին:

Նրա պաշտամունքը կապվում է մի կողմից՝ մահվան և հարության, մյուս կողմից՝ երկրագործության և պտղաբերության գաղափարների հետ, մանավանդ, հաշվի առնելով այն, որ նրա մայրը երկրի աստվածուհի Չեմելեն է: Չալմոքսի վիհում հայտնվելը նմանակումն է սերմը հողին հանձնելու և որոշ ժամանակ հետո ծլարձակելու գործողությունը (սերմը մահանում է, որպեսզի ծիւն արձակվի՝ ըստ հին առասպելական պատկերացումների): Ծեսը հասարակական տեսակյունից դիտարկելու դեպքում կարելի է կապել նաև սերմդափոխության հետ: Հիսուսի մահվան և հարության երթուղյա տունը ևս, ինչ-որ առումով կարելի է առնչել Չալմոքսի պաշտամունքի

²⁷ Տե՛ս C. Watkins, *The American heritage dictionary of Indo-European roots*. Boston, 1985, էջ 28:

²⁸ Տե՛ս Ն. Արոնց, նշվ. աշխ., էջ 256-259, 271, 273, 287:

²⁹ Տե՛ս M. Фасмер, *Этимологический словарь русского языка*, М., 1986, т. II, էջ 93:

հետ³⁰: Մյուս կողմից, Չարվոքսի անհետացման և վերածննդի ծեսը համեմատելի է քրիստոնեական «Յայտնութիւն Տեառն» (հունվարի 5-13), Հուլյան տոմարի հետևորդների մոտ՝ դեկտ. 25 - հունվ. 6, տոնի հետ: Անհետացման և հառնելու հին ծեսի հետ է կապվում Apocalypse-ը՝ «աշխարհի սկիզբ», «աշխարհի վերջ», «հավերժություն», «երկնային արքայություն» գաղափարներով հանդերձ: Ակնհայտ է, որ Սաղմոսներն օրհներգություն են երգասացության եղանակով, «քմարերգություն»՝ հատուկ նվագարանների, մասնավորապես քնարի և տավղի մասնակցությամբ. «Սաղմոս ասացեք Տիրոջը քնարով. քնարով և սաղմոսների ձայնով»³¹, «Երգը բարձրացրեք, քմբուկը տուեք, քաղցր քնարը սաղմոսարանի հետ»³²:

Պատմական փաստերը հուշում են, որ թրակացիներն իրենք քնարերգուներ էին, նվագարաններից նախընտրում էին քնարը: Ի դեպ, և՛ Խորենացին, և՛ Դավիթ Անհաղթը պնդում են, որ հին աշխարհում տարածված գիտության չորս ճյուղերից մեկի՝ երաժշտության գյուտի համար մյուս ազգերը պարտական են թրակացիներին³³: Վերի շարադրանքը ևս ապացուցում է Ն. Աղոնցի այն պնդումը, թե հայ հավատալիքները կապված են թրակյանի հետ³⁴: Այն, որ սաղմոսների «արվեստը» մուտք է գործել Հայաստան Սուրբ Գրքի միջոցով՝ նույնպես դրա ապացույցն է: Ամենայն հավանականությամբ, փյունիկեցիներն են Թրակիայից հին սաղմոսները հասցրել Ավետյաց երկիր³⁵, և այստեղ դրանք որոշ ժամանակ անց միահյուսվել են Դավթի սաղմոսների հետ և գրի առնվել Սուրբ Գրքում:

А. Г. МУШЕГЯН – Замечания по поводу имен и выражений в истории Хоренаци. — Автор статьи обращается к некоторым дискуссионным именам и выражениям известного историка V в. Мовсеса Хоренаци, автора истории древней Армении, конкретно рассматривая следующие имена и формулировки:

Пайапис Каалей, согласно некоторым ученым, является мифологическим персонажем. Автор статьи считает, что Пайапис отождествляется

³⁰ Տե՛ս Ն. Աղոնց, նշվ. աշխ., I. Բ, էջ 259:

³¹ Մք. Գիրք, Սաղմոս ԴԸ:

³² Մք. Գիրք, Սաղմոս ՉԱ:

³³ Տե՛ս Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 9: Նա այդ մասին նշում է լուսանցքում, իսկ բուն տեքստում արձանագրում է. «որպէս զԱ առ Զ. եւ զԹ. առ Փ. եւ զԿ առ Ե. եւ զԸ առ Թ»: Պատմիչն ուզում է ասել, որ տառերից մի քանիսը, որոնք թվով չորսն են և առավել հատուկ են, հաճախակի կիրառություն ունեն մի շարք լեզուներում՝ ի տարբերություն մյուսների, ինչպես որ ալեֆը՝ հաճախադեպ է քաղղեերենում, թե՛ն՝ փյունիկեերենում, կենը՝ եգիպտերենում, իսկ շան՝ թրակերենում, այնպես էլ հին աշխարհում տարածում են գտնում միայն չորս «արվեստներ», այսինքն՝ գիտության չորս ճյուղեր: Դրանց նվիրված բոլոր ազգերի լավագույն նմուշները ժամանակին զնահատվել և քարգմանվել են հունարեն: Այդպիսով՝ պատմիչը համեմատություն է կատարում և միևնույն ժամանակ Հունաստանն անվանում «գիտութեան դայեակ» (I. Բ):

³⁴ Տե՛ս Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 259:

³⁵ Որպես հին սաղմոսների՝ մենք նախապատվությունը տալիս ենք հետևյալ երգերին՝ Ա, Բ, Զ, ԸԺԹ, ԸԼԶ, ԸԾ:

Мовсесом Хореници с *миус Арбэл*, то есть он оказывается сыном Каала в роду Кама. Между тем из ассирийских источников он (Арбэл) известен как Ашшурнацирпал II (883 — 859 гг. до н.э.).

Паруйр выступает у Хоренаци как первый после десятилетий чужеземного владычества царь в династическом роду Гайка, и он же получил корону от Варбака — геродотовского Киаксара. Паруйр не идентичен Партату ассирийских надписей, и потому титулованное имя «скайорди» должно считаться ошибкой переписчиков «Истории» Хоренаци. Автор статьи полагает, что фраза «Паруйр сын скайорди» различных публикаций должна быть исправлена на «Паруйр из рода *скайа* (гиганта)» Гайка, прародителя армян, и Паруйра надо считать одним из наследников Гайка, но не его сыном.

Имя *Араст* в исторических трудах Хоренаци и Бузанда встречается в написании Ераст и Арест. Это разные версии имени внука Арамаиса, которое тождественно урартскому Аргиште и греческому Орестэс.

Салмоск — эквивалент греч. «псалмос», «псалмы» - известным балканистом В. Георгиевым сравнивался с Залмоксис фракийского народа геты. Автор статьи приходит к выводу, что слова *салм* и *селм* в древнеармянском происходят от исконно синонимических корней (см. Ю. Покорный, К. Уоткинс) и фигурируют в сатемных вариантах. Фактически основа Залмоксиса, взятого как имя нарицательное, восходит по значению к словам «склад» или же «яма».